Հավելված N 2
ՀՀ կառավարության 2026 թվականի
հունվարի 22-ի N 97-Ն որոշման

Ա Ր Ա Ր Ո Ղ Ա Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԱՆՁԻ ԵՐԴՄԱՆ

1. Երդման արարողությունը կազմակերպում և իրականացնում է Ծառայությունը, իսկ օտարերկրյա պետությունում՝ Հայաստանի Հանրապետության դեսպանությունը կամ հյուպատոսական հիմնարկը:

2. Երդման արարողությունն իրականացվում է յուրաքանչյուր աշխատանքային օր՝ ծանուցման մեջ նշված ժամին:

3. Երդման արարողությունն անցկացվում է հանդիսավոր պայմաններում՝ Հայաստանի Հանրապետության պետական դրոշի և զինանշանի առջև:

4. Երդման արարողությունը Ծառայությունում սկսվում է Ծառայության պետի կամ նրա տեղակալի, իսկ օտարերկրյա պետությունում՝ դեսպանությունում կամ հյուպատոսական հիմնարկում՝ դեսպանի, գլխավոր հյուպատոսի կամ նրանց կողմից լիազորված դիվանագետի ներածական խոսքով, որից հետո ընթերցվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն շնորհելու մասին Հայաստանի Հանրապետության նախագահի հրամանագիրը: Հաղթանակի և խաղաղության, Հանրապետության, Սահմանադրության կամ Անկախության կապակցությամբ նշվող տոն օրերին երդման արարողությունն իրականացվում է հատուկ հանդիսավոր պայմաններում, որին մասնակցելու համար կարող են հրավիրվել Հայաստանի Հանրապետության պետական մարմնի ղեկավարներ, հասարակական միավորումների, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներ՝ արարողությունը լուսաբանելու համար:

5. Անձը երդում է տալիս երդման տեքստը բարձրաձայն ընթերցելով և «երդվում եմ» բառերն արտասանելով, որից հետո Համակարգում ստորագրությամբ հաստատում է երդման տեքստը:

6. Ծառայության պետը (տեղակալը), իսկ օտարերկրյա պետությունում՝ դեսպանը, գլխավոր հյուպատոսը կամ նրանց կողմից լիազորված դիվանագետը շնորհավորում են անձին երդում տալու կապակցությամբ, որից հետո հնչում է Հայաստանի Հանրապետության օրհներգը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

23.01.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ